6490

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 154 - 25

Նախաձեռնող՝ ***Քաղաքացի Համլետ Սահակյան***
ք. Երևան, Խորենացու փողոց, 211 փ.

Գործունեությունը՝ ***Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր բնակավայրի Վ. Հարությունյան փողոց 15 հասցեում հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համալիրի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 154 - 25

« 05 » հունիսի **2025թ.**

Ծաղկաձոր բնակավայրի Վ. Հարությունյան փողոց 15 հասցեում հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Քաղաքացի Համլետ Սահակյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ)
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, Ծաղկաձոր բնակավայր

Ներածական մաս. Համաձայն քաղաքացի Համլետ Սահակյանի կողմից ներկայացված գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) և նախագծային փաստաթղթի՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր բնակավայրի Վ. Հարությունյան փողոց 15 հասցեում նախատեսվում է հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համալիրի կառուցում (այսուհետ՝ Համալիր):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Ծաղկաձոր համայնքի կողմից 2023թ. փետրվարի 7-ին տրված N 04 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի գրանցման վկայականով ամրագրված 0,734 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ 07-005-0026-0795), որի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Հողամասն իրենից ներկայացնում է բարդ ռելիեֆ: Դիտարկվող հողամասում գոյություն ունեն հանգստի համար նախատեսված շինություններ (մեկ հարկանի տնակներ, հանգստյան տուն, շոգեբաղնիք): Գոյություն ունեցող շինություններից քանդման ենթակա է մեկ հարկանի 07-005-0026-0795-002, 07-005-0026-0795-003 ծածկագրերով 211,2 քմ մակերեսով 2 հատ տնակ և 07-005-0026-0795-007 ծածկագրով 83.81 քմ մակերեսով մեկ տնակ: Սեփականության վկայականով առկա մնացած շինությունները մնում են առանց փոփոխությունների: Ներկայումս տարածքում ստացված քաղաքաշինական փաստաթղթերի հիմքով կազմակերպված է շինհրապարակ, իրականացվում են կառուցապատման աշխատանքներ: Տարածքին երկու կողմից հարակից են հասարակական և հանգստի շինություններով ծանրաբեռնված հողամասեր: Հողամասի շրջակայքում գտնվող շինություններն իրենց նշանակությամբ հիմնականում հանգստյան տներ և հյուրանոցներ են և գտնվում են 15 մ և ավել հեռավորության վրա:

Տարածքում՝ հիմնականում տարածքի պարագծով, առկա է 22 ծառ՝ սոճի, թեղի, թխկի: Համաձայն Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից տրված տեղեկատվության՝ նախատեսվող կառուցապատման տարածքում հատման ենթակա ծառեր չկան:

Ծաղկաձոր գետի և հողամասի սահմանի միջև եղած հեռավորությունները տատանվում են 3 - 30 մ և որոշակի հատվածներում՝ 30 մ-ից ավել: Կառուցվող համալիրի հեռավորությունը գետից 22 մ է և հասնում է մինչև 41 մ:

Նախատեսվող համալիրի հետնամասում գոյություն ունի գրունտային ճանապարհ, որը նախատեսվում է ասֆալտապատել և ապահովել մեքենաների և մարդկանց մոտեցումը դեպի համալիրի երկրորդ մուտք: Ճանապարհի լայնությունը հասնում է 3 մ: Ճանապարհին կից նախատեսվել է նաև քայլուղի: Վ. Հարությունյանի փողոցի կողմից նախատեսվել է արագընթաց ուղի, որի լայնությունը հասնում է մոտ 6 մ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռների հարավ-արևելյան լեռնաճյուղավորություններից մեկում: Հիդրոերկրաբանական տեսակետից գրունտային ջրերը գտնվում են 3,0-28,0 մետր խորությունների վրա: Շինության ստորգետնյա մասերը հնարավոր մակերևութային ջրային հոսքից պաշտպանելու նպատակով իրականացվելու է ստորգետնյա մասերի ջրամեկուսացում և ցամաքուրդային ցանցի տեղադրմամբ՝ ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում:

Տեղամասում լայն տարածում ունեն լիցքային գրունտները, որոնց շերտի հզորությունը տեղամասի տարբեր մասերում տատնվում է 6.0-18.0 մ սահմաններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա, բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ չկան: Հարակից տարածքում առկա պատմամշակութային անշարժ հուշարձանները գտնվում են 674-970 մ հեռավորության վրա:

Համալիրի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- ✓ տարածքի ընդհանուր մակերես – 0,73439 հա,
- ✓ շենքի կառուցապատման մակերես - 1117.1 քմ (15.21 %);
- ✓ ճանապարհ, մայթ և այլ - 824 քմ (11.22 %);
- ✓ գոյություն ունեցող և կառուցապատման փուլում գտնվող շենքերի մակերեսների գումար – 913,4 քմ (12.43 %);
- ✓ կանաչապատման մակերես – 4489.7 քմ (61.14 %);
- ✓ ստորգետնյա ավտոկայանատեղիների մակերեսը ընդհանուր - 3385,4 քմ,
- ✓ ավտոկայանատեղերի քանակը՝ ստորգետնյա՝ 57 հատ և վերգետնյա՝ 13 հատ:

Համաձայն Հաշվետվության և նախագծային փաստաթղթի՝ Համալիրը բաղկացած է 8 հարկերից, որից՝ 5 վերգետնյա, 2 ստորգետնյա, 1 կիսանկուղային և շահագործվող տանիքից: -11,70 և -8,10 ստորգետնյա 2 հարկերում նախատեսված են 57 ավտոկայանատեղիներ և ավել ավտոմեքենայի տեղեր, որոնցից 5-ը սահմանափակ կարողություններով մարդկանց համար: -4,2 կիսաստորգետնյա հարկում նախատեսված են հասարակական տարածքներ, ընդհանուր հարկը բաժանված է երեք հատվածամասերի՝ երեք մուտքով, որոնցից երկու մուտքը հասարակական նշանակության է, իսկ մեկ մուտքը նախատեսված է հյուրանոցային զոնայի համար և յուրաքանչյուրի համար նախատեսված է 2-ական վերելակ, ինչպես նաև նախատեսված է մեկ բեռնատար վերելակ՝ ընդհանուր շենքի սպասարկման համար: Հյուրանոցային հարկի բարձրությունը հատակից հատակ

նախատեսվում է 3.30 մետր: -8,100 նիշով ստորգետնյա ավտոկայանատեղիում նախատեսված է ենթակայան 61,9 քմ չափով:

Ջեռուցման և հովացման համակարգերը նախատեսված են կենտրոնացված:

Կաթսայատունը տեղադրվելու է 26,700 նիշով տանիքի հարկում: Նախատեսվում է տեղադրել 3 հատ կաթսա ՝ ընդհանուրը 900 ԿՎատ հզորությամբ:

Լողավազանն իր ձևով հավասարակողմ չէ (25 մ երկարություն, 11 մ լայնություն): Լողավազանի ծավալը 291,6 խմ է: Նախատեսվում է ջրի ուլտրամանուշակագույն ախտահանում: Ջրի կորուստները պարբերաբար կլրասնուցվեն:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված համալիր միջոցառումների թվում են նաև երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում: Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվելու են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ, արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում և այլն:

Հրդեհանվտանգության նպատակով շենքերում տեղադրվելու են հակահրդեհային հիդրատներով և օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային (հակածխային) արտածման համակարգեր: Շենքերն ապահովվելու են էվակուացիոն աստիճանավանդակներով, տեղադրվելու են վերելակներ:

Համալիրը՝ ներառյալ ստորգետնյա ավտոկայանատեղին, ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար նախատեսված միջոցառումներով (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են նախատեսվող գործունեության իրականացման համար տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան: Աշխատանքներն իրականացվելու են համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունների և/կամ համաձայնությունների առկայությամբ:

Շինաշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շինանյութի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում: Շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 31,0 ամիս: Շինարարությունն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից:

Շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն մոտ 3000 քմ մակերեսով տարածքի վրա, որտեղ պահեստավորվելու են շինանյութերը, կայանվելու է շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն:

Տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են էքսկավատոր, բուլդոզեր, թրթուրավոր կռունկ, շարժական կոմպրեսոր, վերամբարձ ավտոկռունկ, աշտարակային կռունկ, ինքնաթափ ավտոմոբիլ, ձեռքի գործիքներ և այլն: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում՝ հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շաղ, երեսպատման

նյութեր և այլն: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում տեղադրվելու են տակդիրների վրա՝ չգերազանցելով բարձրության նորմերը, սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Շաղախը և բետոնը կառաքվեն Ծաղկաձոր քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Եղանակային տեղումներից և անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն տարածքում նախատեսվող 100 մ³ ծավալով պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի կրկնակի, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 39374 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված 25696 խմ ծավալով հողը կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է (7.4 տ), որը հավաքվելու է աղբահավաք կոնտեյներներում և հեռացվելու է տարածքից՝ աղբահավաք ծառայության կողմից: 480 խմ ընդհանուր ծավալով շինարարական աղբն (այդ թվում տարածքում առկա մեկ հարկանի շինությունների քանդումից առաջացող) ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող շինարարության թույլտվությամբ նշված աղբավայր:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման, անիվների լվացման, անհրաժեշտության դեպքում՝ հրդեհաշիջման համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 16045 մ3/շին. ժամ:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ջրատար մեքենաներով, իսկ խմելու որակի ջուրը կտեղափոխվի ջրի տարաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն իրականացվելու է Կառավարության 2018 թվականի փետրվարի 2-ի N 108-Ն որոշման համապատասխան: Համաձայն Ծաղկաձորի համայնքապետարան ներկայացված կանաչապատման էսքիզային նախագծի՝ իրականացվելու է 4489.7 քմ (61,14 %) մակերեսով կանաչապատում:

Տարածքում նախատեսվում է տնկել Թխկի մանրատերև "Կորալիում" (6 հատ), Թխկի սրատերև (9 հատ), Թխկի կարմիր (6 հատ), Մայրի ատլանտյան "կապույտ" (3 հատ), Հուդայածառ (12 հատ), Գիհի չինական (33 հատ), Գիհի չինական "ոսկեգույն" (18 հատ), Գիհի կազակական (42 հատ), Քնարածառ վարդակակաչանման (42 հատ), Մագնոլիա սուլանժի (24 հատ), Եղևնի կապույտ (3 հատ), Սոճի մուգո (6 հատ), Սոճի սև (6 հատ), Սոսի արևելյան (30 հատ), Բալենի ճապոնական (3 հատ), Վարդ շտամբ (24 հատ), Եղրևանի սովորական (3 հատ), սիզամարգ 4300 մ²: Կանաչապատման նպատակով անհրաժեշտ բուսահողը ձեռք է բերվելու օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է կամ մոտակայքով անցնող ոռոգման ցանցից կամ բերովի ջրով: Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:

Նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու, մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումներ: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ (մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx)) արտանետումների չափումներ, աղմուկի և թրթռումների, հողերի մշտադիտարկումներ):

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների մոնիթորինգի համար նախատեսվել է 1.535.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Ծաղկաձորի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Ծաղկաձոր համայնքի ղեկավարի նստավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային լսում: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքներն իրականացնել համայնքի ղեկավարի և/կամ այլ իրավասու մարմինների կողմից տրամադրված տեխնիկական պայմանների, համաձայնությունների և/կամ թույլտվությունների պահանջներին համապատասխան:
2. Աշխատանքների կատարման ընթացքում բացառել տարածքում առկա ծառաթփային բուսականության հատումն իրականացնելու դեպքերը:
3. Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշմամբ:
4. Մշտադիտարկման արդյունքներով պայմանավորված՝ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջներով, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների ապրելավայրերի հայտնաբերման դեպքում առաջնորդվել գործող օրենսդրական պահանջներով:
5. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայն Ծաղկաձորի համայնքապետարան ներկայացված և հաստատված բարեկարգման, արդիականացման և

կանաչապատման նախագծի՝ պահպանելով Հաշվետվությամբ և նախագծային փաստաթղթով նշված 4489.7 քմ (61,14 %) կանաչապատման մակերեսը, կանաչապատման և բարեկարգման լուծումները:

6. Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող, այդ թվում վտանգավոր թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ծաղկաձորի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

7. Շինարարական աշխատանքները կատարել՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը, ճանապարհների բեռնվածությունը՝ հատկապես հողային հանույթի տեղափոխումը կազմակերպելիս:

8. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

9. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Համլետ Սահակյանի կողմից փորձաքննության ներկայացված՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր բնակավայրի Վ. Հարությունյան փողոց 15 հասցեում հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համալիրի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան